Արձանագրություն N 3

«ՏԾԻԿ-ԳՀԾՁԲ-2019/4ՀՊԾ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

21 նոյեմբերի 2019թ.
Ժամը՝ 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Գուգարաց
Հանձնաժողովի անդամներ՝ Լ.Դիլանյան և Ա.Հարությունյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Հարությունյան
<<Ի Էյ Էներջի Ըդվայզորի>> ՍՊԸ տնօրեն Ա.Շահնազարյան

I. «ՏԾԻԿ-ԳՀԾՁԲ-2019/4ՀՊԾ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում գնային առաջարկների նվազեցման բանակցությունների մասին

1.1. Գնային առաջարկների նվազեցման բանակցությունները տեղի են ունեցել 2019թ-ի նոյեմբերի 21-ին, ժամը՝ 15:00-ին:

1.2. Գնային առաջարկների նվազեցման բանակցություններին հրավիրվել է ընթացակարգին հայտ ներկայացրած միակ կազմակերպությունը՝ <<Ի Էյ Էներջի Ըդվայզորի>> ՍՊԸ-ն:

1.3. Բանակցությունների արդյունքում մասնակցի կողմից ներկայացված բանակցված գնային առաջարկը.

1.3.1 «ՏԾԻԿ-ԳՀԾՁԲ-2019/4ՀՊԾ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի նախահաշվային գինն է.

Ծառայության անվանումը	Նախահաշվային արժեք /ՀՀ դրամ/
«Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային Ծրագիր, Տրանշ 3, Բենիամին համայնքի մոտակայքում հնագիտական տարածքը շրջանցելու նպատակով՝ Մ1 Երևան-Գյումրի-Բավրա ավտոճանապարհի մոտ 2 կմ ճանապարհահատվածի նոր նախագծի և Ձորակապ համայնքի կմ93+700 հատվածում գտնվող նոր ուղեանցի համար ՀՕՏԾ Հավելված/ՈՒԳՊ պատրաստման ծառայություններ»	11,900,000

1.3.2 Բանակցությունների արդյունքում մասնակցի կողմից ներկայացվել է նոր գնային առաջարկ /պայմանագրի կատարման համար ընդհանուր գումարով/.

	Մասնակցի անվանումը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1.	<<Ի Էյ Էներջի Ըդվայզորի>> ՍՊԸ	9,900,000	1,980,000	11,880,000

II.Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի որոշման և հայտարարության մասին

2. Հայտը գնահատվել է «ՏԾԻԿ-ԳՀԾՁԲ-2019/4ՀՊԾ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով: Ներկայացված հայտը համապատասխանում է հրավերով սահմանված՝ հայտերի կազմման և ներկայացման պահանջներին, բացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերն առկա են և համապատասխանում են ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին և գնահատվել են «Բավարար»:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2.1. Հիմք ընդունելով սույն արձանագրության 1.3.2-րդ կետը՝ «ՏԾԻԿ-ԳՀԾՁԲ-2019/4ՀՊԾ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովը որոշեց առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել հայտ ներկայացրած և հրավերի պայմաններին բավարար գնահատված միակ մասնակցին՝ <<Ի Էյ Էներջի Ըդվայզորի>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2.2. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի No. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի պահանջները, սույն նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը

1) հանձնաժողովի նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակում է տեղեկագրում.

2) էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը,

3) էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային ձևով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

III. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին

3. «ՏԾԻԿ-ԳՀԾՁԲ-2019/4ՀՊԾ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել ոչ ուշ, քան Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող աշխատանքային օրը ժամը 15:00-ն, ք. Երևան, Տիգրան Մեծ 4 հասցեում, 7-րդ հարկում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝

Արամ Գուգարաց _____

Հանձնաժողովի անդամներ՝

Լիլիթ Դիլանյան _____

Անահիտ Հարությունյան _____

<<Ի Էյ Էներջի Ըդվայզորի>> ՍՊԸ տնօրեն Ա.Շահնազարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Աննա Հարությունյան